ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2
ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-24/26 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան **25 ապրիլի 2024թ.**

2024թ-ի ապրիլի 9-25-ը ՀՀ, ք. Երևան, Ալիխանյան եղբայրների փող., 2 շենք հասցեում գտնվող «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) շենքում տեղի ունեցավ ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-24/26 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Ա. Թումասյան՝	Հիմնադրամի առաջատար գիտաշխատող,
Ս. Մեսրոբյան՝	Հիմնադրամի հաշվարկային բաժնի ղեկավար,
Ն. Շահնազարյան՝	Հիմնադրամի ավագ հաշվապահ,
Ա. Բաղրամյան՝	Հիմնադրամի գլխավոր հաշվապահ.

Նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Վ. Էլոյանը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի չորս անդամները՝ բացակայում էր հանձնաժողովի նախագահ Լ. Ավետիսյանը, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Թումասյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Վ. Էլոյանը:

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-24/26 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց, վերջիններիս կողմից ներկայացված հայտերի, ներկայացված հայտերի բացման, գնահատման, առաջարկված գների և այլ անհրաժեշտ տեղեկությունների մասին:
2. Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

1.ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-24/26 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ, ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ և ԱՅԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և ներկայացրեց տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների վերաբերյալ տեղեկատվությունը:

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ)
1	Փոփոխական հոսանքի տեխնիկայի օգտագործմամբ սկանավորման համակարգ	16000000

ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-24/26 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2024 թվականի ապրիլի 9-ին, ժամը «17:30»-ին:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և հիմնավորումներ չեն ներկայացվել:

ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-24/26 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր չեն ներկայացվել.

2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հաշվի առնելով, որ գնման ընթացակարգի շրջանակներում ոչ մի հայտ չի ներկայացվել որոշվեց ընթացակարգը հայտարարել չկայացած և հաստատել «ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-24/26 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին» հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Թումասյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Ս. Մեսրոբյան _____

Ն. Շահնազարյան _____

Ա. Բաղրամյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Վ. Էլոյանը _____